«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ - Սովորողների անհատական ուսուցման կարիքների ուսումնասիրումը: Հայտորոշիչ մեթոդները մայրենիում

ԱՌԱՐԿԱ- Մայրենի

ՀԵՂԻՆԱԿ- Անահիտ Շահնազարյան

ՄԱՐԶ - Արագածոտն մարզ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ- Գեղարոտի միջն.դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈ ՒՆ **3**

1. Սովորողների անհատական ուսուցման կարիքների ուսումնասիրումը **5**

2. Հայտորոշիչ մեթոդները մայրենիում **10**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ **21**

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆՑԱՆԿ **24**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի կրթական համակարգում ընդհանրապես, տարրական դասարաններում մասնավորապես բացառիկ տեղ է հատկացվում սովորողների՝ ինքնորույնություն և ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու կարողությունների ձևավորմանը:

Ուստի մերօյա մանկավարժի գործունեությունը չպետք է սահմանափակի սովորողի ստեղծագործական որոնումների շրջանակը:

Ընդհակառակը ուսուցման գործընթացն աշակերտին պետք է ինքանադրսևորման և ինքնազարգացման հնարավորություն ընձեռի: Դա իրականացվում է սովորողների կողմից նորը փորձարկելու, բացահայտումների, ուսումնառության ընթացքում ինքնուրույն գործունեություն ծավալելու միջոցով:

Ուսուցիչը, ուղղորդելով, աջակցելով, սաստելով հանդերձ, պետք է աշխակերտին՝ ասես աննկատ ու անձայն հուշի, «Փորձիր ինքնուրույն հարթել արդյունքի հասնելու քո ճանապարհը»: Մինչդեռ հանրակրթական ուսումնական հաստատություններում կատարվող ուսումնասիրությունները ցույց են տալիս այլ պատկեր, ուր առկա է սովորողների ինքնուրույն գործունեություն ծավալելու կամ իրենց գործունեությունն ինքնուրույն կարգավորելու կարողությունների պակասուրդ:

Գոյություն ունեն բազմաթիվ մանկավարժական մեթոդներ և ուսումնական գործունեության կազմակերպման եղանակներ, որոնք միտված են այդ խնդրի լուծմանը: Սակայն դրանց կիրառմանը ոչ բոլոր դպրոցներում ենք ականատես և ունկնդիր լինում: Հիմնականում դասի «տերը» ուսուցիչն է, իսկ աշակերտները սոսկ հրահանգներ կատարողներ են:

Յուրաքանչյուր ուսուցչի առջև, անկախ դասավանդվող առարկայի բնույթից, դրված են ուսումնադաստիարակչական գործընթացների որակի բարելավման, աշակերտների մեջ աշխատանքի նկատմաբ սեր դաստիարակելու, նրանց կուլտուրական մակարդակը բարձրացնելու խնդիրներ: Ոչ մի բնագավառ այնքան եռանդ, հնարագիտություն չի պահանջում, որքան դպրոցը՝ երեխաների կրթության ու դաստիարակության բնագավառը: Ուսուցչից պահաջվում է ուսումնասիրել յուրաքանչյուր երեխայի, ճանաչել նրա կարողությունները: Ուսուցման և դաստիարակության մեթոդներն ընտրելիս պետք է ելնել դպրոցների տարիքային և անհատական առանձնահատկություններից՝ անուշադրություն

չմատնելով այն բազմազան գործոնները, որոնք ազդում են նրանց զարգացման ու բարոյական ձևավորման վրա:

Ուշինսիկ ասել է. «Եթե մենք ուզում ենք երեխային դաստիարակել բոլոր տեսակներից, ապա մենք պետք է նրան ճանաչենք բոլոր կողմերից»:[1]

Հետազոտության նպատակն է՝

- ՈՒսումնասիրել սովորողների անհատական ուսուցման մեթոդներն ու կիրառելիությունը:

Հետազոտության խնդիրն է՝

- Նշված մեթոդներով բացահայտել անհատական ուսուցման շերտավորված աշխատանքը զարգացման տարբեր մակարդակ ունեցող աշակերտների շրջանակում
- Պարզել աշակերտների ներգրավածության աստիճանը
- Բացահայտել աշխատանքի արդյունքում աշակերտների կողմից արված սխալները:

[1]Ушинский К. Д., Собрание сочинений, Издательство Академии педагогических наук РСФСР, Москва, 1945, ст. 257

1. Սովորողների անհատական ուսուցման կարիքների ուսումնասիրումը

«Ուսուցչին ու աշակերտին հոգեպես կապող տասնյակ հարյուրավոր թելերն այն շավիղներն են, որ տանում են դեպի մարդկային սիրտը: Դա ուսուցչի և աշակերտի մտերմության, ընկերության կարևորագույն պայմանն է: Պետք է ձգտել այն բանին, որ ուսուցչին և աշակերտին համախմբի հոգևոր ընդհանրությունը, որի ժամանակ մոռացվում է, թե մանկավարժը ղեկավար է ու դաստիարակ»:[2]

Ուսումը լոկ մի պսակաթերթիկն է այն ծաղկի, որ կոչվում է դաստիարակություն՝տվյալ հասկացության լայն առումով: Դաստիարակության մեջ չկան գլխավոր ու երկրորդական խնդիրներ, ինչպես որ չկա գլխավորը մնացած բոլոր այն պսկաթերթիների մեջ, որոնք ստեղծում են ծաղկի գեղեցկություն:

Դաստիարակության մեջ ամեն ինչ գլխավոր է՝ և՛ դասը, և՛ դասից դուրս սաների բազմապիսի հետաքրքրությունների զարգացումը, և՛ նրանց փոխհարաբերությունների ներդաշնակեցումը կոլեկտիվում:

Սովորողների անհաատկան ուսուցման կարիքների ուսումնասիրման կարևոր նախապայմանը ուսուցչի մանկավարժական տակտն է, որը մեծ չափով նպաստում է աշակերտների առաջադիմության բարձրացմանը: Չէ՞ որ մանկավարժական տակտն ուսուցչի մանկավարժական հմտության հատկանիշներից մեկն է: Դրանից է կախված ոչ միայն ուսումնադաստիարակչական աշխատանքների որակը, այլև ուսուցչի և աշակերտների փոխհարաբերությունները, նրա հեղինակույթյունը երեխայի և ծնողների աչքում: Ուսուցչի այս հատկությունը պահանջում է խոր գիտելիքներ, ունակություն ու հմտություն, որոնք անհրաժեշտ են ուսումնադաստիարակչական ամեն մի հարցի լուծման դեպքում:

Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ուսուցիչը պետք է պարզի աշակերտի թերությունները և դրանց առաջացման պատճառները, ընտրի և կիրառի թերությունները վերացնելու մանկավարժական ամենաարդյունավետ մեթոդներն ու ձևերը:

Այս տեսակներից հիմնական և լայն տարածում գտած մեթոդներից մեկը համոզումն է: Համոզման մեթոդի կիրառումը ուսուցչից պահանջում է կամք, մանկավարժական և

[2]Сухомлинский, В. А. Родительская педагогика, Избранные сочинения в 3-х томах / В. А. Сухомлинский. – М.: Просвещение, 1981, 360 с.

հոգեբանական հմտություններ, համբերություն, տակտ: Այս մեթոդի խելացի կիրառումով ուսուցիչը կարող է թույլ աշակերտի մեջ աշխատասիրություն դաստիարակել և անկարգներին կարգապահ դարձնել: Երեխաներին համոզելը մեծ օգուտ կարող է բերել դպրոցական աշխատանքներին: Երբեմն պատահում է, որ լավ սովորող աշակերտն էլ է դասի գալիս անպատրաստ: Երբ դա կրկնվում է, ուսուցիչը, դասը չսովորելու պատճառներն իմանալու, անհրաժեշտության դեպքում գործնական օգնություն ցույց տալու փոխարեն, բռնկվում է և աշակերտին «խելքի» բերելու համար որպես «զենք» է օգտագործում բացասական գնահատանիշը՝ չանտեսելով նաև նախատինքի խոսքերը:

Ուսուցչի նման մոտեցումը աշակերտի մեջ փշրում է ձգտումները, թերահավատ է դարձնում նրան իր իսկ ուժերի նկատմամբ:

Մեծ ներգործություն է ունենում հոսադրման մեթոդի ճիշտ կիրառումը: Հուսադրման շնորհիվ, սեփական ուժերի նկատմամբ անվստահ աշակերտը դառնում է համարձակ: Նա սկսում է սիրել դպրոցը, ուսուցանվող առարկան, դառնում է աշխաատասեր ու պարտաճանաչ, աշակերտական կոլեկտիվի անբաժան մասնիկը: Աշակերտին հուսադրելու համար բավական է, որ ուսուցիչը լինի սրտացավ, անկեղծ ու հոգատար: Հմուտ մանկավարժը նույնիսկ դասը չսովորող աշակերտին (եթե ճանաչում է նրա հոգեբանությունը), նախատելու փախարեն կարող էասել՝ «Չէի սպասում, քո մասին լավ կարծիք ունեմ, դու կարող ես լավ սովորել նման սխալ մյուս անգամ թույլ չտաս, այս անգամ քեզ ներում եմ, անբավարար գնահատական չեմ նշանակում» և նմանատիպ այլ բացատրություն–հիմնավորումներ:

Ուսուցիչը պետք է սիրի իր գործը, աշակերտին, ապրի մանկավարժական աշխատանքով: Բժիշկը կարող է չսիրել իր հիվանդին, նրան բավարարում է նաև հոգատարությունը: Ճարտարապետը կարող է չճանաչել և, առավել ևս, չսիրել իր նախագծած բնակելի շենքի ապագա բնակիչներին, բավական է նրանց կենցաղի և ապրելակերպի մասին մտահոգությունը: Բայց ուսուցչը պարտավոր է իմանալ, ճանաչել և անպայման սիրել այն երեխաներին, որոնց դաստիարակությունը վստահված է իրեն, և որոնց պետք է սովորեցնի ինքը: Աշակերտին սիրելը, ճանաչելը արվեստ է, և պետք է իմանալ, տիրապետել այդ արվեստին:

Երբեմն ուսուցիչը բողոքում է աշակերտի վարքագծից, որ աշակերտը չի կատարում տրված հանձնարարությունը,չի նախապատրաստվում օրվա դասերին, անկարգապահ է և այլ: Այդպիսի դեպքերը հաճելի չեն, սակայն եկեք խոստովանենք, որ մենք՝ ուսուցիչներս, առանձին դեպքերում խախտում ենք մանկավարժական էթիկայի կանոնները՝ դիպչելով

երեխայի զգացմունքներին: Մինչդեռ կարելի է ավելի համբերատար կերպով համոզել աշակերտին նրա անիրավացիության մեջ այնպես, որ նա զգա իր կատարածի աններելիությունը և աշխատի հետագայում այլևս չկրկնել: Ուրեմն, կարևորը երեխայի հոգու խորքը թափանցելն է, նրա բարեկամը դառնալն է: Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է ունենա ներըմբռնման ուժ, անտեսանելին նկատելու, զգալու կարողություն և կատարի ինքնավերլուծություն. «Ինչու՞ ես ատեմ երեխային՝ նրա այսօրվա վատի համար: Ես նրան կսիրեմ այն լավի համար, ինչ նրա մեջ կդաստիարակեմ վաղը»:

Ամեն առիթով չէ, որ երեխային պետք է նախատել : Բելնսկին ասում էր.«Դաստիարակությունը մարդուն դարձնում է կամ առաքինի Սոկրատես, կամ՝ այլասերված Ներոն»:

Մանկավարժական աշխատանքների փորձը ցույց է տվել, որ լավ տակտ ունեցող ուսուցիչները դաստիարակության բնագավառում նախապատվությունը տալիս են առողջ փոխհարաբերությանը: Այսպիսով, մանկավարժական տակտը ոչ միայն առաջադիմության բարձրացման, այլև աշակերտների գիտակցական կարգապահության, նրան ճիշտ դաստիարակության ապահովման կարևորագույն նախապայման է: Որքան էլ տարիքով փոքր ու գիտելիքներով ցածր մակարդակի կանգնած լինի երեխան, այնուամենայնիվ, նա ապագայի հասուն մարդն է: Աշակերտը, որքան էլ այս կամ այն առարկայից հետ մնա, որոշակի հակումներ ու նախասիրություններ կունենա: Ուսուցիչը պետք է որոնի և գտնի նրա մեջ նսած դրական հատկանիշը, հետողական ու հագատար աշխատանք տանի այն մշակելու և խորացնելու համար: Անհրաժեշտ է անպայման գնահատել աշակերտի շատ թե քիչ լավ աշխատանքը, թէ՞ որ մասերից է կազմվում ամբողջը: Որքան էլ մշուշապատ լինի երեխայի իմացական ներուժը, միևնույն է, այն թաքնված է ինչ–որ ծածկի տակ: Հարկավոր է զգուշությամբ հետ տանել այդ քողը, և նրա տակից կառկայծի երեխայի պայծառ միտքը: Այդ հատկանիշով են պայմանավորված ուսուցչի վարպետությունը, քաղաքացիությունը, տաղանդը և հեղնակությունը:

Սովորողների անհատական մոտեցման կարևորագույն գործոններից մեկն էլ աշակերտների նկատմաբ գործածվող հարկադրանքի միջոցն է: Հարկադրանքը կարող է լինել բազմազան՝ հանձնարարության պարզ առաջադրումից մինչև կտրուկ ու պահանջկոտ կրկնումը: Համենայն դեպս, երբեք չի կարելի դիմել ֆիզիկական հարկադրանքի, քանի որ այն ամենից քիչ օգուտ է բերում և երեխայի մեջ զզվանք է առաջացնում ուսումնական աշխատանքային խնդրի հանդեպ: Կան աշակերտներ, որոնք կարող են սովորել, բայց ծույլ են,

անաշխատասեր: Այսպիսի աշակերտների նկատմամբ անհրաժեշտ է գործադրել հարկադրանքի զանազան միջոցներ: Դասերից հետո ծույլ աշակերտներին դպրոցում պահել, ուսուցչի ղեկավարությամ դասը պատրաստել տալն է, իսկ ծուլության դեմ պայքարելու համար երեխային աստիճանաբար ուսումնական աշխատանքի մեջ ներգրավելը դասի նկատմամբ դանդաղորեն հետաքրքրություն առաջ բերելն է:

Հաջորդ կարևորագույն կետը՝ նրանց մտավոր կարողությունների ուսումնասիրությունն է: Անբավարար առաջադմություն ունեցող աշակերտը, եթե չի վարժվել տեսական մտավոր աշխատանքի, ապա ուսուցիչը սիստեմատիկ տևական աշխատանք պետք է ծավալի և վարժեցնի նրան աստիճանաբար մտավոր գործունեության: Աշակերտը սովորում է պլանավորել իր աշխատանքը դպրոցում, տանը և վարժվում տնային, համառ աշխատանքի և ուսումնական աշխատանքի համար ձեռք բերել անհրաժեշտ հմտություններ և ունակություններ: Աշակերտների անհաջողությունը հաճախ բացատրվում է նրանց կամքի թուլությամբ, ապա անհրաժեշտ է գիտակցական վերաբերմունք դաստիարակել ուսման նկատմամբ, սովորեցնել կազմակերպվածություն,նպատակասլացություն, սկսած գործը մինչև վերջ կատարելու ձգտում:

Կարևոր գործոններից է նաև ճանաչել երեխային՝ բազմակողմանիորեն ուսումնասիրելով նրան: Այդ նպատակով կիրառելի է դիտման, զրույցի մեթոդը, երեխային ուսումնասիրել բնական պայմաններում՝ աշխատանքի, ուսման և խաղի մեջ՝ նախապես կազմելով պլան:

Աշակերտների նկատմամբ անհատական ուսուցման մոտեցման սկզբունքը նեղ իմաստով չի կարելի հասկանալ: Հաճախ այն կիրառվում է այն աշակերտների նկատմաբ, որոնք հետ են մնում դասարանի ընդհանուր մակարդակից: Մինչդեռ ուսուցման և դաստիարակության անհատականացումն անհրաժեշտ պայման է յուրաքանչյուր աշակերտի առաջադիմության բարձրացման համար:

Անհատականացումն ուսուցման մեջ արտահայտվում է՝ մի կողմից աշակետների անհատական, ինքնուրույն աշխատանքներն ուժեղացնելով, մյուս կողմից՝ ուսուցման մեջ աշակերտերի նկատմամբ անհատական մոտեցում ցուցաբերելով: Դրական գնահատական ունեցող աշակերտին ավելի բարձր պահանջներ պետք է առաջադրել:Չէ՞ որ նրանցից մեկը կարող է ուսումնական նյութը մակերեսորեն յուրացնել և արագ մոռանալ, մյուսը՝ դարձնել սեփականություն, հաջորդն էլ՝ ինքնուրույն հետևություն անել սովորածից: Աշակերտի անձնավորության զարգացումը և նրա կողմից գիտելիքների յուրացումը ընթանում են ոչ թե ուղիղ, այլ զիգզագ գծերով:

Դպրոցականի որոշ հատկանիշներ՝ զարգացող և ձևավորվող, թուլանում և նույնիսկ անհետանում են և առաջ գալիս նորերը: Այդ հանգամանքը պայմանավորված է երեխայի կենսաֆիզիկական ու հեգեբանական կարողություններով և զարգացման օրինաչափություններով: Ուսուցիչը, ուստի, հաշվի առնելով իր սաների զարգացման աստիճանը, ուսուցողական, անհատական աշխատանքներ է հանձնարարում և ամեն կերպ աշխատում է, որ յուրաքանչյուրը մասնակցի դասի ընդհանուր գործընթացին՝ սեփական ուժերի կենտրոնացմամբ:

Օրինակ՝ ուժեղ աշակերտն ստանում է համեմատաբար դժվար առաջադրանք, իսկ թույլը՝ հեշտ: Կարևորել դասի դժվարության աստիճանի ճիշտ որոշումը, աշակերտի կարողություններն իմանալը, նրանց հետ շփվելու կուլտուրան:

Այսպիսով՝ զարգացման տարբեր մակարդակ ունեցող աշակերտների հետ շերտավորված աշխատանք տանելը և անհատական մոտեցում ցուցաբերելու գործելակերպը, պահանջում են մանկավարժական վարպետություն, աշխատասիրություն և ուժերի գերլարում:

2. Հայտորոշիչ մեթոդները մայրենիում

Մայրենի լեզվի դասընթացի հիմնական նպատակներից մեկը լավ ընթերցողներ պատրաստելն է: Իսկ ինչ է նշանակում «լավ ընթերցող», միթե՞ երեխաները, ճանաչելով հայերեն այբուբենի բոլոր տառերը և դրանք վարժ միավորելով բառերի ու նախադասությունների մեջ, արդեն լավ ընթերցող են համարվում:

Գրաճանաչ լինելէ դեռ չի նշանակում ակտիվ ընթերցել կարողանալ: Կարդալու կարողության ձևավորման առաջին աստիճանի հաղթահարումից հետո անհրաժեշտ է լուրջ աշխատանքներ ծավալել սկսնակ ընթերցողների մեջ կարդալու որակական հատկանիշների ձևավորման ուղղությամբ:

Այդ աշխաանքների հիմնական նպատակը սովորողների մեջ կարճ ժամանակում հնարավորինս շատ և հիմնարար տեղեկության ձեռքբերման կարողության ձևավորումն ու զարգացումն է, քանի որ կարդալու կարողությունն այսօր ոչ թե նպատակ, այլ միջոց է՝ նոր գիտելիքների և տեղեկատվության ձեռքբերման համար:

Այսօր ուսուցչի խնդիրը ավելի շատ աշակերտների գործունեության նպատակաուղղումն է, սովորել սովորեցնել, քան միայն գիտելիքներ հաղորդելը, քանի որ միայն ուսուցման ընթացքում հնարավոր չէ այնքան տեղեկություն փոխանցել և սովորեցնել, որքան անհրաժեշտ է նրա զարգացման համար: Ուստի, այսօր համար մեկ նպատակը, գրքից օգտվելու կարողության ձևավորումն է:

Տարրական դպրոցում ընթերցողական կարողությունների ձևավորում իրականացվում է բացատրական ընթերցանության մեթոդով, որը հայ դպրոցում գործածվել է դեռևս Խ. Աբովյանի կողմից: Հետագայում այն նշանավոր շատ մեթոդիստ–մակավարժների կողմից մշակվել, կատարելագործվել է՝ դառնալով բնագրերի շուրջ տարվող բազմաշերտ և բազմակողմանի աշխաատնքների իրականացման մի կուռ համակարգ:

Այսօր էլ մայրենի լեզվի ընթերցարաններում տեղ գտած նյութերը սվորողների կողմից ուսումնասիրվում են հիմանկանում բացատրական ընթերցանության մեթոդով: Շատ ուսուցիչներ որոշ փոփոխություններ, լրացումներ են կատարում մեթոդի մեջ՝ երբեմն էլ համադրելով այն համագործակցային ուսուցման մեթոդների կամ դրանց առանձին տարրերի հետ: Օրինակ, հաճախակի են կիրառում Կանխագուշակումներով կարդալը, Փոխգործուն նշանների համակարգը, Կմախքը, Երեք կողպեք՝ մեկ բանալի և այլ մեթոդներ:

Կարելի է ասել, որ այս մեթոդները, իհարկե, տալիս են իրենց դրական արդյունքը, սակայն, ավելի շատ կոսմետիկ փոփոխություններ են իրականացնում սովորողների մեջ կարդալու որակի բաձրացման ուղղությամբ տարվող աշխատանքներում:

Մեր կողմից փորձ է արվել կրտսեր դպրոցականների մեջ կարդալու կարողության զարգացումն ապահովել մեկ այլ՝ հայտորոշիչ մեթոդիկայի կիրառմամբ: Այն նախատեսված է հենց տեքստերի ուսումնասիրման համար և կարող է կիրառվել կարդալու վարպետության տարբեր՝ ասենք, օրինակ, «բառային», «նախադասությունային», «պարբերությունային» մակարդակների դեպքում:

Բանն այն է, որ մեթոդիկայի էությունը թեմայի հատվածաբար ուսումնասիրման մեջ է, այսինքն՝ սովորողները տեքստը բաժանում են որոշակի (ոչ մեծ) հատվածների և աշխատում այդ հատվածների վրա: Ընդ որում՝ որպես ուսումնասիրվող հատված կարող են հանդիսանալ պարբերությունը, նախադասությունը կամ բառը:

Այս հանգամանքը հնարավորություն է տալիս մեթոդիակն կիրառելու դպրոցի բոլոր դասարաներում՝ սովորողների մեջ կարդալու զարգացման բառային, նախախադասությունային, պարբերությունային մակարդակներին համապատասխան:

Մեթոդիկան ունի գործնականում կիրառման որոշ առնձնահատկություններ: Հատկապես տարրակ դպրոցում մեթոդիկայի կիրառմանը նահրաժեշտ է հանգամանորե նախապարաստվել: Ներկայանենք երրորդ դասարանում մեթսդիկայի կիրառման մեր փորձը:

Նախապատրաստական աշխատանքներ

Առաջին հերթին ընտրվում են ընթերցարանում եղ գտած այն նյութերը, որոնք պետք է սովորողներն ուսումնասիրեն դասարանում: Այնուհետև կազմվում է հաշվառման աղյուսակը և փակցվում պատին:

Աղյուսակում պետք է կատարվեն նշումներ աշխաատնքի ընթացքի վերաբերյալ՝ ուսուցչի կամ աշակերտների կողմից: Եթե նույնիսկ սկզբնական շրջանւ կատարում է ուսուցիչը, ապա նաընտրելի է՝ աստիճանաբա այդ աշխատանքը թողնել աշակերտներին:

Հաշվի առնելով կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունները և այն, որ նրանք դեռ նոր են սովրում աշխատել մեթոդիկայով՝ կարելի է պատրասել նաև տարբեր հուշաթերթեր՝ տետրի գրանցման կարգի, զույգում աշխատանքի իրականացման ալգորիթմի վերաբերյալ:

Հուշաթերթերը նախաատեսվում են ույգերի համարմ սկզբում յուրաքանչյուր սեղանին դրվում է մեկական հուշաթերթիկ, իսկ հետագայում, անհրաժեշտության դեպքում, երեխաները կարող են վերցնել դրանք պահարանից կամ ուսուցչի սեղանից:

Սովորաբար մեկճերկու բնագրի ուսումնասիրություններից հետո աշակերտներն աշխատում են առան հուշաթերթի:

Ցանկության կամ հնարավորության դեպքում՝ կարելի է յուրաքանչյուր հուշաթերթից պատրաստել մեկ մեծադիր նմուշ և պաստառի նամն ամրացնել պատին: Տեքստերում տեղ գտած նորածանոթ կամ անհաշսկանալի բառերի բացատրության համար անհրաժեշտ է դասարանում ունենալ բացատրական, հոմանիշների, հականիշների դպրոցական բառարաններ (յուրաքանչյուից 2-3 հատ):

Առաջին կամ երկրորդ դասարանում՝ մեթոդիկայի կիրառման առաջին շրջանում, երբ սովորողները դեռևս չունեն տեքստի վրա աշխատելու բավարա հմտություններ, ուսումնասիրվող յուրաքանչյուր բնարի համար հարկ է պատրաստել նաև հատուկ հարցարաններ, որոնք օգնում են սովորողներին ճիշտ և ավելի հեշտ յուրացնելու հատվածների, ինչպես նաև ամբողջ բնագրի բովանդակությունը:

Քանի որ սկզբնական շրջանում երեխաները պետք է բնագրի բովանդակությունից, նորածանոթ բառերից բացի յուրացնեն նաև աշխատանքի նոր ձևը, նպատակահարմար է հարցարաններում բնագրի վերնագրի, հարցերի ու առաջադրանքների հետ նշել հատվածների առաջին ու վերջին բառերը, ինչպես նաև այն բառերն ու արտահայտությունները, որոնք պետք է երեխաները գրեն տետրերում և սովորեն:

Թեմայի յուրացումը:

Յուրաքանչյուր աշակերտ ստանում է թեմա և հաշվառման աղյուսակում իր անվանդիր: Տետրու նոր էջից գրում է վերնագիրը: Թեմաները բաշվու են այնպես, որ 2-3 աշակերտ ունենա նույն թեման:

Սովրողները թեմաները յուրացնում են ըստ պարբերությունների (ըստ հատվածների՝ տեքստի համռոտ իմաստային մասերի)՝ յուրաքանչյուր նոր պարբերության յուրացման համար զույգ կազմելով դասնկերներից մեկի հետ:

Առաջին պարբերության մշակման համար սովորողը զույգ է կազմում, զույգի անունը գրանցում իր տետրում: Նա իր թեմայի առաջին պարբերությունը բարձրաձայն կարդում,

քննարկում է զույգի հետ, տետրում գրում և բառարանով բացատորում է անհասկանալի բառերը: Պարբերության բովանդակությունը պարաբանելուց հետո նրանք միասին վերնագրում են այն: Սովորողն այդ վերնագիրը եղեցիկ գրում է տետրում: Այնուհետև նա օգնում է զույին՝ նույն կերպ աշխատելու իր թեմայի պարբերության վրա (դա կարող է զույգի առաջին պարբերությունը չլինել), որից հետո նրանք բաժանվում են:

Երկրորդ պարբերության մշակման համար սովորողը նոր զույգ է կազմում, նրա համար կարդում է առաջին պարբերության վերնագիրը, պատմում պարբերության բովանդակությունը, պատասխանում զույգի կողմից առաջադրված հարցերին, անհրաժեշտության դեպքում՝ վերնագրի մեջ կատարում ճշգրտումներ:

Եթե պատմելու ժամանակ աշակերտը լավ չի հիշում պարբերության բովանդակույթյունը, կարող է օգտվել րքից կամ դիմել զույգի օգնությանը: Միայն դրանից հետո կարդում է երկրորդ պարբերությունը, զույգի հետ քննարկում, պարզաբանում դրա բովանդակությունը, բացատրում անհասկանալի բառերը, վերնագրում պարբերությունը և վերնագիրը գրում տետրում:

Նույն ձևով նա օգնում է իր զույգին աշխատելու իր թեմայի հերթական պարբերության մշակման ուղղությամբ:

Եթե սովորողի թեման ծավալուն է՝ կազմված մեծ թվով պարբերություններից (ինչն այնքան էլ ցանկալի չէ տարրական դպրոցում), ապա վեցերորդ, յոթերորդ պարբերություններից հետո նա կարող է նոր զույգերին մանրամասն չպատմել առաջին մի քանի պարբերությունների դրանց վերնագրերը, այսինքն՝ տեքստի մանրամասն պլանը՝ սովորողը կարող է հանձնել այն: Յուրաքանչյուր աշակերտ, ավարտելով (1-4-րդ հատվածների) բովանդակությոնը, այլ ներկայացնել դրանց գխավոր միտքը, իսկ արդեն մշակած մյուս պարբերությունները պետք է մանրամասն վերարտադրի՝ տետրից կարդալով դրանց վերնագրերը:

Մշակելով իր թեմայի բոլոր պարբերությունները և տետրում ունենալով թեմայի ուսումնասիրումը, այդ մասին նշում է կաատորում աղյուսակի համապատասխան մասում՝ կետը կամ գիծը դարձնելով պլյուս՝ (+), իսկ թեման հանձնելուց հետո (+) նշանը վերցնում է շրջանակի մեջ: Միայն դրանից հետո նա կարող է նոր թեմա վերցնել:

Ուսուցչի դերը թեմայի մշակման ժամանակ:

Աշխատանքի ողջ ընթացքում ուսուցիչը կատարում է ոչ միայն կազմակերպողի, կոորդինացնողի դեր, այլև անմիջական մասնակցություն է ունենում սովորողների թեմաների որոշակի հատվածների մշակմանը՝ հերթով զույգ կազմելով նրանց հետ:

Միայն այդպես նա կարող է յուրաքանչյուր աշակերտի սովորեցնել ճիշտ պահպանել պարբերության մշակման ալգորիթմը, ստուգել մշակած պարբերությունների յուրացման մակարդակը, ուղղություն տալ զույգում իրականացվող աշխատանքների վերաբերյալ:;

Ամեն անգամ աշխատանքի վերլուծության (ռեֆլեքսիայի) ժամանակ ուսուցիչը կարող է անդրադառնալ ընդհանուր բնույթի թերություններին, սխալներին, տալ համապատասխան ցուցումներ՝ դրանցից խուսափելու նպատակով (Աշխատեք զույգում աշխատելիս արդեն մշակած պարբերության վերարտադրումը չվերածել սովորեցնելու գործընթացի: Շատ երկար մի աշխատեք միևնույն զույգի հետ, փորձեք խնայողաբար օգտագործել ձեր ժամանակը: Տետրում վերնագրերը գրելիս ուշադրություն դաձրեք ձեռագրին, աշխատեք գրել առանց ջնջումների և այլն):

Շատ կարևոր է նաև իրենց հաջողությունների, ձեռքբերումների համար աշակերտներին խրախուսելը:

Բայց դա պետք չէ կրի ընդհանրական բնույթ (Ապրեք, լավ աշխատեցիք: Ամեն ինչ լավ է և այլն), այլ կոնկրետ օրինակներով պետք է ցույց տալ, թե ինչն են կարողանում անել երեխաները (Ձեր վերնագրերն արդեն ավելի կոնկրետ են արտահայտում հատվածների բովանդակությունը:

Զույգում աշխատելիս քիչ եք օգտագործում ոչ գրական բառեր, աշխատում եք ձեր խոսքում կիրառել բնագրից սովորած բառերը և այլն):

Ցանկալի է, որ ուսոցիչը յուրաքանչյոր թեմայի ուսումնասիրության ժամանակ աշակերտի հետ առնվազն մեկ զույգ կազմի: Բայ հնարավոր է, որ դասարանում կլինեն աշակերտներ, որոն հետ ավելի հաճախակի աշխատելու անհրաժեշություն կզգացվի: Ամեն անգամ աշխատելով այս կամ այն աշակերտի հետ՝ ուսուցիչն իր անունը գրում է նրա տետրում:

Թեմայի հանձնումը.

Սովորողը թեման կարող է հանձնել տարբեր կերպ: Նպատակահարմար է, որ նա ելույթ ունենա փոքր խմբի առջև, որի թվակազմը տատանվում է երկուսից վեց վարդու սահմաններում: Խմբում կարող են ընդգրկվել այն աշակերները, ովքեր ուսումնասիրում են

նույն թեման, ովքեր պեքտ է սկսեն ուսումնասիրել այն, նրանք, ովքեր վաղուց ուսումնասիրել են այն և ուզում են կրկնել, ինչպես նաև՝ ուսուցիչը: Փոքր մբում ելույթը կարող է տևել 5-10 րոպե:

Սովորողը թեման կարող է հանձնել նաև միայն ուսուցչին՝ պլանով վերապատմելով բոլոր հատվածների բովանդակությունը, պատասխանելով ուսուցչի հարցերին, ներկայացնելով տետրի գրանցումները և այլն:

Տետրի գրանցման կարգը.

Տետրի էջը բաժանվում է երկու հավասար մասերի: Լայն հատվածի առաջին տողում գրվում է ստեղծագործության վերնագիրը: Էջի նեղ մասում՝ յուրաքանչյուր պարբերության վերնագրի դիմաց, գրվում է զույգի անունը, նրա թեմայի վերնագիրը կամ համարը: Դա հնարաորություն է տալիս աշակերտին հետևելու, թե ինչ հաճախականությամբ է հանդիպել այս կամ այն թեմային, որոշել, թե որ թեմա ն կարելի է ուսումնասիրել ինքնուրույն, որ թեմայի ուսումնասիրությունն է նպատակահարմար սկսել և այլն: Յուրաքանչյուր թեմա պետք է գրել նոր էջից:

Մեթոդիկայի առավելությունները.

- Աշխատելով փոքրիկ հատվածներով՝ սովորողները ավելի լավ են յուրացնում նյութը:
- Յուրաքանչյուր պարբերություն քննարկելով զույգի հետ, վերլուծելով նրա բովանդակաին մանրամասները՝ սովորողը ակտիվ խոսքային գործունեություն է իրականացնում, ինչը նպաստում է նրա խոսքի զարգացմանը (խոսելով են խոսել սովորում):
- Թեման մշակելիս սովորողները օգտվում են բառարաններից, այս կամ այն բառի, արտահայտության իմաստը հարցնում իրարից՝ ձեռք բերելով շատ կարևոր կարողություններ, հմտանալով հաղորդակցության մեջ:
- Յուրաքանչյուր հատվածի քննարկման արդյունքում սովորողները դուրս են բերում նրա հիմնական, գլխավոր միտքը և ձևակերպում այն վերնագրի տեսքով:
- Փոփոխական կազմով զույգերում աշխատելիս աշակերտները սովորում են լսել իրար, օգնել, աջակցե միմյանց, համաձայնել, ընդհանուր որոշման գալ և ընդհակառակը՝ վիճել, պաշտպանել սեփական տեսակետը և այլն:
- Կարդալու, խոսելու և լսելու խոսքային գործողություններից բացի՝ յուրաքանչյուր պարբերության մշակման ժամանակ սովորողը նոև գրում է, նշումներ կատարում և այլն:

- Ամեն անգամ՝ հերթական պարբերության մշակումը սկսելուց առաջ, աշակերը վերահիմաստավորումմ, ամրապնդում է թեմայի մինչ այդ մշակած ամբողջ մասը:

Հետաքրքիր է, որ տարբեր մարդկանց հետ աշխատելիս միևնույն հատվածը սովորողը պատմում է յուրովի՝ ամեն անգամ իր համար բացահայտելով նոր բաներ:

Դիդակտիկան ծրագրավորման տեսության ներկայացուցիչները կարևորում են ուսումնական գիտելիքի կրկնությունը տարբեր առիթներով: Օրինակ՝ օտար լեզվի ուսուցման ժամանակ նոր բառի ուսուցման համար այն պետք է սովորողներին առաջարկել 7-23 անգամ:

Վ.Ֆ. Շատալովի ուսուցման տեխնոլոգիայում նախատեսված է ուսուցանվող նյութի կրկոնություն առնվազն 8 անգամ: «Պետք է հիշել. Որպեսզի կարողությունը վերածվի հմտության, յորաքանչյուր մարդ այն պետք է կրկնի առնվազն 6 անգամ (որոշ մարդիկ՝ նույնիսկ 10 անգամ ավելի)»:

- Աշխատելով տարբեր զույգերի հետ՝ սովորողները հնարավորություն են ունենում նախապես ծանոթանալու այն թեմաներին, որոնք իրենք նույնպես ուոումնասիրելու են:
- Յուրաքանչյուր պարբերության մշակումից հետո սովորողը վերնագրում է այն՝ գելով իր տետրում:

Թեմայի մշակումն ավարտելուց հետո նա ունենում է մանրամասն պլան, որն օգնում է նրան վերարտադրել թեման (կամ նրա որևէ մասը):

Հայտորոշիչ մեթոդների միջոցով կազմակերպված աշխատանքը ներառում է ուսուցիչ–աշակերտ և ուսուցիչ–ծնող մշտական փոխհամագործակցության տարբեր և հետադարձ կապով աշակերտին (ինչպես նաև նրա ծնողին) իր առաջադիմության ընթացքի մասին մշտական տեղեկատվություն է տրամադրում:

Հայտորոշիչ մեթոդները կազմված են երեք մասից՝ աշակերտական տարբեր խմբերի կողմից գործածության նկատառումներով:

Հայտորոշիչ մեթոդները հիմնականում նպատակ ունեն խթանել և օգնել սովորողին բարելավելու իր առաջադիմությունը: Դրանք հնարավորություն են տալիս պարզել ինչպես յուրաքանչյուր սովորողի, այնպես էլ ամբողջ դասարանի ձեռքբերումներն ու բացթողումները՝ ուսումնական գործնթացում ապահովելով հետադարձ կապ, և բարելավել ուսուցումը: Ուսուցանող նպաատկով կարելի է օգտագործել կարճ ժամանակի համար նախատեսվող հայտորոշիչ մեթոդներ, որոնց արդյունքները միավորներով չեն գնահատվում:

Դրանց իրական նպատակը ուսումնասիրած թեմայից կամ թեմայի մի մասից սովորողների ոչ թե միավորային գնահատումն է, այլ յուրաքանչյուր սովորողի կողմից նյութի յուրացման աստիճանի պարզումը, նյութը վատ յուրացրած կամ չյուրացրած սովորողների բացահայտումը՝ նրանց գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մասին տեղեկություն ստանալն է, որը հնարավորություն կտա ժամանակին կատարել անհրաժեշտ շտկումներ և բարելավել նրանց ուսուցումը, նպաստել նրանց առաջընթացին: Այն պետք է նաև ուսուցչին, որպեսզի բացահայտի բացթողումները և կարողանա ճիշտ պլանավորել իր հետագա աշխատանքը:

Կարճ ժամանակի համար նախատեսվող հայտորաշիչ մեթոդներն ավելի ճկուն են, և դրանց արդյունքներն ավելի օբյեկտիվ, հուսալի և արդար են վերլուծությունների համար: Նման մեթոդներում ընդգրկվող առաադրանքների հարցերը լինում են հիմնականում հետևյալ տեսակների՝

- ընտրովի պատասխանով,
- կարճ պատասխանով,
- համապատասխանացման,
- բաց թողածը լրացնելու հացերով:

Հայտորոշիչ մեթոդը ունի հետևյալ առանձնահատկությունները.

- կիրառվում է ուսումնառության ընթացքում,
- կարճ ժամանակի համար է նախատեսված՝ 15-20 րոպե,
- ստուգում է մեկ հիմնական գիտելիք կամ ունակություն,
- բոլոր առաջադրաքներն ուղղված են նույն գիտելիքի, կարողությանկամ հմտության ստուգմանը,
- առաջադրանքների տեսակները բխում են տվյալ թեմայի ուսուցման նպատակից,
- հարցերը ձևակերպված են կարճ, պարզ և մատչելի,
- առաջադրանքները միջին բարդության աստիճան ունեն (1-ին և 2–րդ մակարդակ), այնպիսին են, որ դրանք հաղթահարելի են սովորողների մեծ մասի կողմից,
- արդյուքնները արագ են ստուգվում և արժևորվում,
- արդյուքները թույլ են տալիս մեկնաբանել սովորողի առաջադիմության աստիճանն ու կարիքները,

- արդյունքների վերլուծությունից, մեկնաբանությունից հետևում է օժանդակություն ընտ անհրաժեշտության:

Հայտորոշիչ մեթոդները տրվում են յուրաքանչյուր սովորողի կողմից տվյալ դասանյութի յուրացման աստիճանը պարզելու և նրա հետ հետադարձ կապի հաստատման նպատակով: Գրավոր կամ բանավոր արժևորման ժամանակ կարևորվում են ուսուչի հետևությունները մեկնաբանությունները: Աշխատանքը վերլուծելիս անհրաժեշտ է յուրաքանչյուր սովորողի ներկայացվի նյութի յուրացման իր մակարդակը, նկատված բացթողումները:

Այդ վերլուծությունները և մեկնաբանությունները պետք է այնպես արվեն, որ օգնեն սովորողին բարելավելու իր արդյուքնները, ուսուիցչի, սովորողի կամ ընկերների կողմից տանել համապատասխան աշխատանք՝ նկատված թերությունները շտկելու, ուսուցումը խթանելու համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Ուսումասիրվող թեմայի շրջանակներում մեր կողմից կատարվել է գործնական հետազոտություն: Հետազոտությունը իրականացվել է հարցաթերթիկի միջոցով: Հարցմանը մասնակցել են տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչներ, ովքեր դասավանդում են տարբեր դպրոցներում: Հարցումն իրականացվել է անանուն:

Հարցման նպատակն է եղել պարզել՝ արդյոք տարրական դասարաններում կիրառվում է ուսուցիչների կողմից հայտորոշիչ մեթոդը, որքանով է այն արդյունավետ և ինչ առավելություններ ու թերություններ ունի մեթոդի կիրառումը:



Գրաֆիկ 1. Բաշխումն ըստ հայտորոշիչ մեթոդը կիրառող և չկիրառող ուսուցիչների

Այսպիսով, ինչպես տեսնում ենք տասը ուսուցիչներից ընդամենը յոթն են կիրառում հայտորոշիչ մեթոդը տարրական դասարաններում որպես ուսուցման գործիք, իսկ երեքը նշել են, որ չեն կիրառում այն իրենց աշխատանքային պրակտիկայում:



Գրաֆիկ 2. Հայտորոշիչ մեթոդի արդյունավետության գնահատում

Հարցման հաջորդ պնդումը վերաբերվում էր հայտորոշիչ մեթոդի արդյունավետությանը: Հարցի նպատակն էր պարզել, թե ուսուցիչների համար արդյոք արդյունավետ է կիրառել հայտորոշիչ մեթոդը սովորողների անհատական ուսուցման գործընթացում:

Ըստ հարցման արդյունների հարցվողների 60%-ը պատասխանել է, որ հայտորոշիչ մեթոդը արդյունավետ է, իսկ 40%-ը պատասխանել է, որ արդյունավետ չէ:



Գրաֆիկ 3. Ընթերցանության ընթացքում նյութը յուրացնելու ժամանակ մեթոդի կիրառման արդյունավետության ցուցանիշ

Ուսուցիչներին տրվել է՝ <<Հայտորոշիչ մեթոդը օգնում է ընթերցանության ժամանակ նյութը լավ յուրացնել >> պնդումը: Հարցվողներին տրվել է ընտրել տարբերակներից մեկը՝ <<Միանշանակ համաձայն եմ>>, <<Համաձայն եմ>>, <<Չեզոք>>, <<Համաձայն չեմ>>, <<Կտրականապես համաձայն չեմ>>:



Գրաֆիկ 4. Հայտորոշիչ մեթոդի բացասական կողմերի գնահատման ցուցանիշ

Հաջորդ հարցման նպատակն էր, պարզել՝ արդյոք հայտորոշիչ մեթոդի կիրառումը ունի բացասական կողմեր: Սակայն ինչպես կարելի է տեսնել Գրաֆիկ 4-ում՝ ուսուցիչների 100%-ը նշել է, որ հայտորոշիչ մեթոդի կիրառումը բացասական կողմեր չունի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ճերտավորված առաջադրանքները նպաստում են ավելի կայուն գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանը:

Դրանք ուսուցչին հնարավորություն են տալիս արդյունավետ կազմակերպելու աշակերտի ինքնուրույն գործունեությունն ու դրան նպատակաուղղված ղեկավարումը՝ սովորողների անհատական կարիքների հաշվառմամբ:

Կիրառելով սովորողների ինքնուրույն գործունեությունը կազմակերպելու զանազան մեթոդներ և հնարներ՝ չպետք է մոռանալ, որ աշակերտին հարկավոր է նախապատրաստել համապատասխան գործունեության կատարմանը: Հակառակ դեպքում նրա աշխատանքում արդյունավետություն արձանագրել հնաարվոր չէ:

Սովորողների ինքնուրույն գործոնեության հմտորեն կազմակերպումը կօգնի նրանց յուրացնելու առարկայական անհրաժեշտ գիտելիքներ, տիրապետելու համապտանի ուսումնական կարողություններին և պատրաստ լինելու ստեղծագործական ակտիվ ուսումնառության:

Այս ամենը կարելի է ամփոփել մեկ կոչով. «Նպաստել անձի զարգացմանը»: Այս պատվերն է մեզ տալիս հասարակությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ավագյան Վ., Անտոնյան Ն., Խաչատրյան Ռ., Մայրենի 3, Հանրակրթական դպրոցի դասագիրք, Երևան, «Լույս», 2004
2. Կրուպսկայա Ն., Մանկավարժական ընտիր երկեր, Երևան, 1982
3. Մկրտչյան Մ., Կրթության կազմակերպման կոլեկտիվ եղանակի կայացման հիմնահարցերը, Երևան, 2001
4. Տալիզինա Ն., Աշակերտների ճանաչողական գործունեության ձևավորումը, Երևան, 1985
5. Օխտինա Լ., Դասի հոգեբանական հիմունքները, Երևան, 1979
6. Рыжов В., Дидактика: учебное пособие для студентов пед. колледжей и лицеев, Юнити-Дана, 2004
7. Сухомлинский, В. А. Родительская педагогика, Избранные сочинения в 3-х томах / В. А. Сухомлинский. – М.: Просвещение, 1981
8. Ушинский К. Д., Собрание сочинений, Издательство Академии педагогических наук РСФСР, Москва, 1945